

ՊԱՏՄԱԿԱՆ

ՅՈՎԱՍԷՓ ԷՄԻՆ

Յովսէփ Էմինը (կամ Յովսէփ Էմին-եանը), 1726 - 1806, ԺԸ. Դարի երկրորդ կէսի հայ ազատագրական մտքի ու լուսաւորական շարժման խոշոր ու յայտնի գէմքերից մէկն է եղած:

Յովսէփ Էմինի նախահայրերը Հայաստանից տեղահան են արուել ԺԷ. Դարի սկզբին՝ Շահ Աբաս Առաջինի կողմից հայերու բռնազավթի ժամանակ: Հայաստանէն անցնելով Գարսկատառն, նրանք բնակութիւն են հաստատում Համադան քաղաքում, ուր և ծնւում է Յովսէփ Էմինը:

Մանուկ հասակից նա զրկւում է մօրից: Իր հայրը առևտրական գործերով մեծ մասամբ եղել է Հնդկաստանի կալկաթա քաղաքում: Միակ անձը որ զբաղուել է իր որդու դաստիարակութեամբ, եղել է նրա մեծ պապը՝ Միքայէլը, Թէև վերջինս նոյնպէս զբաղուել է առևտրով ու ճանապարհորդութիւններ կատարել: Մանուկ Էմինը մեծ մասամբ իր մեծ պապից է լսել Հայաստանի և հայ ժողովրդի մասին Միւնիքի ապստամբութեան պատմութիւնը, նրանից է իմացել հայ ժողովրդի ծանր վիճակի մասին: Իր պապի հետ ունեցած այդ զրոյցները մեծ ազդեցոթիւն են թողել պատանու վրայ:

Տարիներ ետքը Էմինը փոխադրւում է հօր մօտ՝ կալկաթա, ուր ընդունւում է Անգլիական դպրոց: Կալկաթայում Էմինը շատ չաճախ շփում է ունեցել Անգլիացիներին հետ, արեւել է Անգլիական զորքերու գինովածութիւնները: Էմինը այստեղ յանգում է այն մտքին, որ ազգայինների ազատագրական պայքարին օգնելու համար պէ՛տք է սովորել բազմական գործը, որովհետեւ դժուար է պնդել որ ընդգծել է իր յուշերում: Երբ որ զարթոյններ դէմ մղած պայքարում ունի իր վճռական դերը:

Յովսէփ Էմինը եւրոպայում գինուսուրական կրթութիւնը ձեռք բերելու իր ցանկութիւնը յայտնում է հօրը, բայց վերջինս կորուկ կերպով մերժում է: Այստեղ Յովսէփ Էմինը հակառակ իր հօր կամքին վարձւում է Անգլիական մի նաւում որպէս սեւագործ բանուոր, և ուղևորւում է Անգլիա 1751 թուի Փետրուարի 14ին՝ դաստարի գրպանով և առանց ձեռննային զգեստի:

Կասկած չկայ որ Էմինը Լոնդոնում շատ դժուարութիւնների է հանդիպում, բայց ի վերջոյ Անգլիացի յայտնի գործը, հասարակական-գործիչ Էդմոնդ Քյուրթի և ապա Նորթումբերլենդի դքսի օգնութեամբ տեղաւորւում է Վուլվիչի անգլիական ռազմական ակադեմիայում:

Նորթումբերլենդի դքսին գրած բացարկականում, Էմինը հանգամանօրէն պարզարանում է իր Լոնդոն գալու շարժառիթները, նպատակը և մասամբ հետագայ անելիքները: Այդ բացարկականում, որ ամբողջութեամբ թերուած է նրա ինքնակենսագրութեան բնոյթ ունեցող գրքում, ըստւում է թէ ինքը նպատակի մը համար եկած է Լոնդոն, սովորել, կրթուել ու մարզուել, ու վերադառնալ հայրենիք և նուիրուել հայրենիքի ազատագրութեան վեհ գործին: Յովսէփ Էմինը նախապէս եւրոպա գնալու իր նպատակին առթիւ խօսում է նաև իր հօր գրած նամակում: Այդ նամակում շեշտւում է որ ինքը Լոնդոն է գնացել սովորելու պատերազմի արուեստը, որով պէտք է պատերազմել բոլոր անոնց դէմ, որոնք հալածում են հայ ազգը ու նրան գերի պահում:

Առանց այդ արուեստի, անհնար է ազատել հայրենիքը օտարների տիրապետութիւնից:

Վուլվիչի ռազմական ակադեմիայում Յովսէփ Էմինը մնում է տասներեք ամիս: Սովորելուց յետոյ, Էմինը ցանկութիւն է յայտնում մասնակցելու Անգլո-Տրամանակական պատերազմին և իր բարեկամների ու հովանաւորների համաձայնութիւնը ստանալով մեկնում է ռազմական: Այդ քայլը առնելով, նա համոզուած էր որ աւելի լաւ է համարել դպրոցում տեսուրթեամբ զբաղուել փոխարէն կռուի գնալ:

և գործնականում սովորել պատերազմական արուեստը:

Թաղամաշտում էմինը ցուցաբերում է չտեսնուած խելախուժին, յանդգնութիւն ու համութիւն, արդարացնելով իր հովանաւորողների յոյսերն ու սպասումները: Պատերազմի կապակցութեամբ Հոլանդիայում եղած ժամանակ, էմինը հանդիպում է ունեցել այնտեղում գտնուած հայ առեւտրականների հետ:

Այդ մասին էմինը իր կենսագրութեան մէջ քնու չի խօսում, բայց իր մօտ բարեկամներից և աջակցողներից մէկի՝ Տիգին Մանթէկայի մի նամակում տեսած է, թէ էմինը խորհրդակցել է Հոլանդիայի քաղաքների հայ առեւտրականների հետ, յայտնել է նրանց իր հետագայ գործունէութեան ծրագրի մասին և ստացել է նրանց հաւանութիւնը:

Յովսէփ էմինի մտալոյսացումների մասին մօտաւոր գաղափար է տալիս Վրաց Հերարի թագաւորին նրա գրած նամակը: Այստեղ էմինը նախ զարգացնում է հայ-վրացական միացեալ պետութիւն ստեղծելու գաղափարը, յետոյ խօսում է այն մասին, որ Եւրոպական ժողովուրդների յաղթանակներն ու հզօրութիւնը ձեռք չեն բերուել միայն բազիլի սլօմով, այլ ամէն ինչ կատարուած է արուեստով ու իմաստութեամբ: Ոչ մի ազգ հզօր չէ առանց իմաստութեան:

էմինը դառնալով Հերակլին ընդգրծում է, թէ այն ամէնը, ինչ որ գիտութեան վրայ չէ հիմնուած, որքան էլ հզօր լինի ու բարձր, նմանում է մի բանի, որ չիմուած է աւաղի վրայ: Յովսէփ էմինը Հերակլին յիշեցնում է թէ ինչպէս միտապ կայսրը՝ Պետրոս Առաջինը սովորեց, իմաստութիւն ու գիտութիւն ձեռք բերեց և իր թագաւորութիւնը հզօր դարձուց: Այնուհետեւ էմինը իր նամակում որդի խորին կոկիծով անդրադառնում է հայ ժողովրդի ծանր ու դժուարին կացութեան և ցանկութիւն է յայտնում զինուորական ծառայութեան մասնել Հերակլի մօտ և իր ուժերուն ներած չափով օժանդակել Հայաստանում ու վրաստանում գիտութեան տարածման և զլխաւորաբար ժողովրդի լուսաւորութեան գոր-

ծում, Եւրոպական ազգական արուեստի ոգիով բանակը վարժեցնելուն ու կազմակերպելուն և օտարների ճնշումներից ահաժանքներից ժողովրդին ազատագրելուն:

Հայ-վրացական միացեալ պետութեան ստեղծման գաղափարն այն ժամանակուայ պայմաններում ունէր իր կարեւոր քաղաքական նշանակութիւնը: էմինի տեսակէտն ունէր իր առանձնայատուկ նշանակութիւնը: Նա վստահ հաւատացած էր թէ հայ և վրացի ժողովրդներն առանձին չեն կարող իրենց ազատագրութեան և անկախութեան համար յաջողութեամբ պայքարել թէ՛ թրքական և թէ՛ պարսկական պետութիւնների դէմ:

Այստեղ շատ հարկաւոր է միաւորել երկուսի ուժերը և նրանց գլուխ դնել մի մարդու, որի հեղինակութիւնը ճանաչուէր և ընդունելի լինէր երկու ժողովուրդների համար: Օրուան մարդը և հեղինակութիւնը Հերակլ թագաւորն էր, որի տոհմական ծագումը կապում էր Բագրատունեաց առհմի հետ և ընդունելի էր ինչպէս վրացիներին՝ այնպէս էլ հայերի համար:

Նայն այս գաղափարը դրոհորուած էր նաև Մադրասի խմբակի հրատարակուած «Որոգայթ Փառաց» գրքում, որի շարադրմանը, ամենայն հաւանականութեամբ, իր մասնակցութիւնն է բերած նաև Յովսէփ էմինը:

էմինի Հերակլին գրած նամակն արժարծում էր այն միտքը, թէ որեւէ ազգ միւս ազգերի կողմից ճանաչուած և յարգուած է միայն այն դէպքում, երբ ունի հզօր պետութիւն, հզօր ուժ: Ուն է ազգի ու պետութեան հզօրութիւնը և ուժեղութիւնը հիմնուած է, առաջին հերթին, գիտութեան և արուեստի վրայ: Գիտութիւնը քո էմինի նշանակում էր, բացի դասազան երևոյթներից ու քնադատողների վերաբերող գիտելիքների պաշարից նաև կրթութիւն, դաստիարակութիւն և նշմարութիւն, լուսաւորութիւնն ու քաղաքակրթութիւնը ժողովրդի մէջ տարածելու համար:

Իսկ արուեստի տեսակէտում էմինը համարում էր գերազանցապէս ազգական

գործը, պատերազմելու և յաղթելու կա-
տարեալ հմտութիւն, իմաստութիւն ու
կարողութիւն:

Էմինը չնշտում է օրինականութեան
պահպանման և օրէնքներու կարեւորու-
թիւնը պատութիւնը ամուր պահելու գիր-
քում և գործում: Անշուշտ բոլոր բարու-
թիւնները իմաստութիւնից են առաջա-
նում, չնշտում էր նա, բայց իմաստու-
թիւնն էլ հզօր չէ առանց արգարութեան,
որի հովանին օրէնքն է:

1760 թուականին Էմինը ուղեւորում
է Հայաստան: Հայրենի երկրում ճանա-
պարհորդելիս, Ջինիս գիւղում մի հետա-
քերի դէպք է պատահում: Էմինի և
գիւղացիներուն միջև սկսւում է մտերիմ
խօսակցութիւն: Դառնալով գիւղացիներ-
ին՝ մտերմաբար հարցնում է, թէ ինչու
նրանք ազատ չեն, ինչու անփական թա-
գաւոր, պետութիւն չունեն:

Գիւղացիները Էմինին պատասխանում
են, թէ իրենց ազատութիւնը անգնա-
կանում է լինելու: Այն հարցին՝ օր Էմինը
հարցուցած էր գիւղացիներին թէ մի՞ է
ձեզ այդպէս հաւատացրել, հետեւում է
պատասխանը — Եկեղեցու Սուրբ Հայրե-
րը, որոնք ասում են թէ հայ ազգը աշ-
խարհի սկզբից հպատակ է եղել և այդ-
պէս էլ պէտք է մնայ:

Այս խօսակցութեան ընթացքում, Է-
մինը գրպանից հանում է Մովսէս Խորե-
նացու Հայոց Պատմութիւնը, որից տեղի
քահանան հատուածներ է կարդում հայոց
թագաւորութեան մասին:

Դրանից յետոյ, Էմինը պատմում է
գիւղացիներին Եւրոպական ժողովուրդների
մասին, թէ ինչպէս նրանք ազատ են
ապրում, և Աւետարանն ու սուրբ գրքերը
չեն հասկացել այնպէս ինչպէս հայ հոգե-
ւորականներն են բացատրում: Եւրոպա-
կան ազգերը խաչը դրօշ են դարձրել,
որով քաջ զինուորները կուում և մեռ-
նում: Էմինը չնշտում է գիւղացիներին
օր բանական էակք պէտք չէ հանդուրժի
ուրիշի գերի լինել, նոյնիսկ պէտք չէ
ուղեւայ որ իր կրօնակիցները փորձեն
բռնանալ իր վրայ: Էմինը պարզապէս
բացատրում է գիւղացիներին թէ նախա-

խնամութեան կողմից բոլոր մարդիկ հա-
ւասար են ստեղծուել, որպէսզի պատշաճ
օրէնքներով կառավարուեն նոյն արդա-
րութեամբ:

Հետագայում Էմինը գնում է Կարին,
իսկ յետոյ՝ Բայազետ, այնտեղից էլ, 1761
թ. Ապրիլի վերջերին՝ Էլմիածին, որ-
տեղ հոգեւորական դասը, բացի օրուան
կաթողիկոս Յակոբ Շամախեցուց, անհա-
մակիր են գտնում նրա նկատմամբ: Կա-
րելի է ենթադրել, որ Էմինը իր ծրա-
գրերի մասին խօսել է Կաթողիկոսի հետ:
Նոյն թուականի դարնան վերջերին,
նա դուրս է գալիս Էլմիածնից և ուղե-
ւորում է Լոնդոն: Այնտեղ իր բարե-
կամների միջոցաւ անցագիր ու յանձնա-
րարականներ է ստանում Լոնդոնի Ռու-
սական դեսպան Գրեյցիից և, 1762 թ.
Յունուարին արդէն Պետերբուրգում էր:
Էմինը համոզուած էր, որ Հայաստանի
ազատութիւնը կարող է իրականանալ
Ռուսաստանի օգնութեամբ:

Յովսէփ Էմինը մօտ մէկ տարի մնում
է Ռուսաստանում և բանակցութիւններ
վարում Չարական կառավարութեան մի
շարք ներկայացուցիչների հետ: Ապա ու-
ղեւորւում է Անդրկովկաս և 1763 թ. դար-
նանը հասնում է Թիֆլիս: Հոն նրան ըն-
դունում է Վրաց թագաւոր Հերակլը, որը
չափազանց ոգեւորւում է Էմինի գաղա-
փարներով: Տեսակցութեան ընթացքում,
Էմինը խորհուրդ է տալիս զպրոցներ
բացել, որտեղ սովորեն 7-16 տարեկան
պատանիներ, իսկ 16-20 տարեկանից
կազմել գումարտականք, Եւրոպացիների
օրինակով, նրանց վարժեցնել ռազմական
արուեստը, զէնքի գործածութիւնը: Ամէն
օր նրանց համար կազմակերպել զրոյց-
ներ՝ պատմութեան հերոսական դէպքերի
մասին: Այնտեղ Էմինը կը չնշտէ 21 տա-
րեկան հասակը, երբ նրանք մարզուելով
կը դառնան լաւ և հմուտ զինուորական-
ներ, և նոյն ժամանակ կը զարգանայ
նրանց իմաստութիւնը, որը պիտի ծաղ-
կեցնի և լուսաւորի երկիրը, ինչպէս որ
եղել է Եւրոպայում:

Յովսէփ Էմինը յոյս ունէր և վստա-
ծէր որ կը գայ ժամանակ, երբ հայերը կը
միանան վրացիներին, կը կազմեն զօրա-

աւար բանակ, միասնաբար կը տապալեն օտար պետութիւններ ղաթան լուծն ու ազատ կը լինեն բռնակալութիւնից:

Էմինի միակ յայտնի ու ցանկութիւնն էր ազատել հայերին, ստեղծել հայ-վրացական զինակցութիւն և ապաւինել Ռուսաստանի հովանաւորութեան: Այնուհետև նա գնում է Ղարաբաղ և Հնդկաստան:

Կալիպթա վերադառնալուց յետոյ Էմինը չի հրաժարուում իր ազատագրական պայքարից: 1773 թուականին մեկնում է Մաքրաս և իր մասնակցութիւնն է բերում այդտեղ եղած ազատագրական խմբակի գործունէութեանը: Մաքրասում եղած ժամանակը Շահմիր Շահմիրեանի աջակցութեամբ փորձում է Մաքրասի հայ վաճառականներից որոշ գումար հաւաքել և գնալ արևմտեան Հայաստան, Ս. Կասրապետ վանքի վանահայր Յովնան Եպիսկոպոսի մօտ, որ ձգտում էր կազմակերպել ազատագրական շարժում: Այդ փորձը, սակայն, անյաջողութեան է մատնուում:

1780-ական թուականներին նա գրեց «Յովսէփ Էմինի կեանքն ու Արիթմները» յուշագրական գիրքը, որ լոյս տեսաւ 1792 թուականին, Անգլերէն լեզուով:

Յովսէփ Էմինը հայ ազատագրական շարժման փայլուն գործիչներից մէկն է: Անոր քաղաքական գործունէութեան բուն նպատակն էր՝ պայքարել հայրենիքի ազատագրման ի խնդիր: Նա միշտ էլ պաշտպանում էր ժողովրդների քաղաքական ազատութեան գաղափարը, քարոզում ու քաջալերում էր ազատասիրութիւնը: Նրա գերազանց և բուն նպատակն է եղել իր ժողովրդի ազատագրութիւնը օտարների տիրապետութիւնից: Ազատութիւնն ու ազատասիրութիւնը համարել է բարձր գաղափար:

Էմինը քարոզում ու քաջալերում է լուսաւորութիւն: Նա այդ անում էր, նպատակ ունենալով գաղութներ բռնալ և ուսումը վարժել բոլորին, այլև ժողովրդի

միջին յետամնաց սովորութիւնների վերացումը, ազէտ հոգեւորականների ատորնացուցիչ քարոզներին ունիղդիր չլինելու խորհրդով: Էմինը հոգեւորականներին քարկոծում էր այն բանի համար, որ նրանք ժողովրդին պահում են խաւարի ու ագիտութեան մէջ: Նա քննադատում էր նաև հայ առևտրականներին, որովհետև նրանք շատ անտարբեր էին հայրենիքի ազատագրութեան գործին կապմամբ:

Էմինը մարդասէր էր, միտ էլ քաւորում էր հիւմանիզմ: Մարդ էակը, անկախ դասնանքից ու ազգային տարբերութիւնից, պէտք է որ լինի ազատ ու անկախ — ոհա Էմինի սկզբունքը:

Յովսէփ Էմինը միշտ էլ ջատագովում է օրէնքը: Ժողովրդի զարգացման ու ամրապնդման համար, բացի դիտութեան և լուսաւորութեան տարածումից, շատ անհրաժեշտ են նաև ճշմարիտ օրէնքներ և օրինականութեան խիստ պահպանում: Այստեղ Էմինը օրինակ է բերում Անգլիային: Շեշտելով, նա ասում է որ Անգլիացիները հզօրութեան են հասել նաև նրանով, որ ունեն ընտիր օրէնքներ, որոնք շնորհիւ մարդիկ պաշտպանում են անիրաւութիւններից: Էմինը ջերմ պաշտպան է հանդիսանում օրէնքի առաջ մարդկանց հաւաստութեան գաղափարին, լինեն նրանք հարուստ թէ աղքատ:

Էմինը ջերմ մասնակից է եղել Մագրասի խմբակի հրապարակած «Որոգայթ փառաց» գրքի օրէնսդրութեան մասի շարադրմանը:

Մեծ է եղած Յովսէփ Էմինի դերը ԺԸ. Դարի երկրորդ կէսի հայ ազատագրական պայքարի պատմութեան մէջ: Էմինը այդ ժամանակաշրջանի ազատագրական մտքի ու բուրժուական, հակաֆեոդալական լուսաւորական շարժման խոշոր գէմբերից մէկն է եղած:

ՌՈՒՐԷԼ ՎՐԴ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ